ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

**Մշակվել է՝** համայնքի ղեկավարին կից գործող ,Չկալովկա համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնիե կողմից

**Ներկայացվել է՝** համայնքի ղեկավար Վահրամ Կարապետյանի կողմից

**Հաստատվել է՝** համայնքի ավագանու **10.02.2017թ** .թիվ **8- Ն** որոշմամբ

գ.Չկալովկա **2017թ.**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ…………………………………………………...……..
2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ...........................................................
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ................
4. ՀՋՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ…………………………………………………………………..
5. ՀՋՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ…………………………………………………………………………
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ........................................................................................................

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի 2017-2021թթ. Զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնք իավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, ,Տեղական ինքնակառավարման մասին՚ ՀՀ օրենքը պետքէ համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ,Տեղական ինքնակառավարման մասին՚ ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Չկալովկա համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝արտադրական կազմակերպությունների, գյուղատնտեսության, տուրիզմի, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով ,Տեղական ինքնակառավարման մասին՚ ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և Չկալովկա գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 7-ի N 17-Ն որոշմամբ ստեղծված համայնքի ղեկավարին կից գործող, Չկալովկա համայնքի զարգացման քառամյա ծրագրին տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված են Չկալովկա համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶՀԾ-ն ներառում է նաև Չկալովկա համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Չկալովկա համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Չկալովկայի

բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ԽՄ-ը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՁՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

# 2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## *2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

Չկալովկան հիմնադրվել է 1840 թվականին ռուս էմիգրանտների կողմից: 1946 թվականին վերանվանվել է ի պատիվ փորձարկիչ օդաչու Վալերի Չկալովի՝ Չկալովկա, մինչ 1946 թվականը անվանվել է նաև Ալեքսանդրովկա և Զեյնալ:

Չկալովկան գյուղական համայնք է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում: Գյուղը գտնվում է Սևանա լճի արևմտյան ափին, ծովի մակարդակից 1925մ բարձրության վրա:

Համայնքը արևելքից սահմանակից է Նորաշեն համայնքին, իսկ հյուսիս-արևմուտքից Լճաշեն համայնքին : Հեռավորությունը մարզկենտրոն Գավառ համայնքից 33 կմ է, մայրաքաղաք Երևանից 65կմ:

Չկալովկա համայնքի վարչական տարածքը կազմում է 2585.21 հա, որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 2392.84 հա-ը, բնակավայրերը զբաղեցնում են 66.22 հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝ 5.53 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 11.88 հա., հատուկ պահպանվող տարածքները՝ 105.37 հա, պետական սեփականություն հանդիսացողհողերը՝ 565.33 հա։

Չկալովկա համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 517 մարդ (աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Մարդ |
|---|---|---|
| 1. | Բնակչության թվաքանակը, մարդ | 517 |
| 2. | Տնային տնտեսությունների թվաքանակը | - |
| 2.1 | Այդ թվում՝ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող | - |
| 2.2 | Կիսակառույցներում բնակվող | - |
| 3. | Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը | 8 |

Համայնքի բնակչության 52.4% կազմում են տղամարդիկ և 47.6% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

| Հ/Հ | Ցուցանիշները | Ընդամենը | Կանայք | Տղամարդիկ |
|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի բնակչության թիվը, այդթվում՝ | 517 | 246 | 271 |
| | մինչև 1 տարեկան | 5 | 4 | 1 |
| | 1-2 տարեկան | 8 | 4 | 6 |
| | 3-4 տարեկան | 13 | 5 | 8 |
| | 5-6 տարեկան | 11 | 4 | 7 |
| | 7-10 տարեկան | 27 | 12 | 15 |
| | 11-14 տարեկան | 25 | 11 | 14 |
| | 15-17 տարեկան | 12 | 4 | 8 |
| | 18 և ավելի տարեկան | 414 | 200 | 214 |
| 2. | Կենսաթոշակառուներ(ներառյալ հաշմանդամներ)այդ թվում՝ | 78 | 45 | 33 |
| | Տարիքային և աշխատանքային | 45 | 22 | 23 |
| 3. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | 2 | 1 | 1 |
| 4. | Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | - | - | - |
| 5. | Հաշմանդամ երեխաներ | - | - | - |
| 6. | Խնամակալության հանձնված երեխաներ | - | - | - |
| 7. | Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ | - | - | - |
| 8. | Արցախյան պատերազմի մասնակիցներ | - | - | - |
| 9. | Հաշմանդամներ | 29 | 16 | 13 |
| 10. | Զբաղվածներ | 210 | | |
| 11. | Գործազուրկներ | 102 | 56 | 46 |
| 12. | Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը | 8 | | |
| 13. | Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը | 1 | - | - |

Գործազուրկների մեծամասնությունը կազմումեն կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

## *2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ*

Չկալովկա գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 17-ի N 5-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **16962.9** հազար դրամ, ծախսերի գծով՝ **11715.0** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **752.1** հազար դրամ: 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է **49.5 %՝ 8395.2** հազար դրամ: Համայնքի ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, արտադրելով կաթ և միս: Համայնքը իր աշխարհագրական դիրքով շատ բարենպաստ է օրգանիկ մթերքների արտադրության համար, սակայն գյուղացիները արտադրված կաթը և միսը շուկայում մրցունակ չլինելու պատճառով չեն վերամշակում և հանձնում են մթերող կազմակերպություններին և անհատ քաղաքացիներին շուկայականից շատ ցածր գներով: Գյուղատնտեսական մթերքների ծավալների ավելացման համար չկան շահավետ պայմաններ: Անհրաժեշտ են բարձր կաթնատվությամբ և մսատվությամբ անասուններ , որին կարելի է հասնել միայն արհեստական սերմնավորում կատարելու ճանապարհով, ինչը ներկա շուկայական պայմաններում գյուղացու համար հասանելի չէ, քանի որ շատ բարձր գին արժե: Վերջին տարիներին գյուղում մեծ թափ է ստացել մեղվաբուծությունը , որը մեղրի իրացման շուկայի առկայության դեպքում կարող է կենսամակարդակի բարձրացում ապահովել գյուղացիական տնտեսություններին: Հողերի մանր, կտրտված , հիմնականում մեծ թեքությունների վրա գտնվելու , արդի տեխնիկայի բացակայության, որակյալ սերմացուների և էժան պարարտանյութերի բացակայության պատճառով գյուղացիները դաշտավարությամբ հիմնականում չեն զբաղվում , քանի որ անարդյունավետ է և ոչ եկամտաբեր: Համայնքում չկան գործող հիմնարկ – ձեռնարկություններ : Համայնքի գյուղացիական տնտեսությունների միակ զբաղմունքը հանդիսանում է գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: Համայնքը գտնվելով Սևանա լճի ափին , իր բնական պայմաններով , պատմամշակույթային հուշարձանների առկայությամբ մեծ պոտենցիալ ունի տուրիզմի ճյուղերի զարգացման համար: Սակայն համայնքի վարչական տարածքում չկան տեղադրված համապատասխան ճանաչողական վահանակներ, մաքչելի և ժամանակակից հանգստյան տներ և հյուրանոցներ : Տուրիզմի տարբեր ճյուղերում կապիտալ ներդրումներ կատարելու դեպքում կանխատեսվում է , որ կստեղծվեն շուրջ 50-ից ավելի աշխատատեղեր սպասարկման և ծառայությունների մատուցման ոլորտներում, ինչը մեծ խթան կհանդիսանա համայնքի ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

Համայնքի զարգացման համար անհրաժեշտ են մեծ կապիտալ ներդրումներ կաթի ընդունման կետի հիմնման և կաթի վերամշակման արտադրամաս հիմնելու համար: Նշված ոլորտում ներդրումներ ապահովելու դեպքում անհամեմատ կերպով կբարձրանա գյուղացիական տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակը և մեծ խթան կահանդիսանա ճյուղի հետագա զարգացման համար:

Համայնքում գործում է մեկ կրթական հաստատություն ՝ < Չկալովկա համայնքի հիմնական դպրոց> ՊՈԱԿ: Դպրոցը վերանորոգված է:

**Աղյուսակ 3. Չկալովկա համայնքի հանրակրթական դպրոցների, նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների, նախնական մասնագիտական կրթական հաստատության վերաբերյալ ցուցանիշներ**

| Հ/հ | Հաստատության անվանումը | Աշխատողների թիվը | Սովորողների թիվը |
|---|---|---|---|
| 1. | «Չկալովկա համայնքի հիմնական դպրոց ՊՈԱԿ» | 22 | 46 |
| 2. | | | |
| 3. | | | |
| 4. | | | |
| 5. | | | |
| 6. | | | |
| 7. | | | |
| 8. | | | |

Չկալովկա համայնքում գործում է բուժ-մանկաբարձական կետ < Չկալովկայի ԲՄԿ > : Բուժկետի շենքը գտնվում է բարվոք վիճակում, ապահովված է առաջնային բուժ-օգնություն ցույց տալու սարքավորումներով, սակայն ունի արդի բուժսարքավորումների և գույքի համալրման կարիք:

## *2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ*

- ✓ Համայնքի կենտրոնական մասում ՝ դպրոցի հարակից տարածքում, 2009 թ. համագյուղացի բարերարի միջոցներով կառուցվել է մանկապարտեզ: Այն գրեթե համալրված է անհրաժեշտ գույքով: 2017 թվականի գարնանը նախատեսվում է մանկապարտեզի բակի բարեկարգում և շենքի ներսում չօգտագործման հետևանքով առաջացած թերությունների վերացում (վերանորոգում): Գյուղը ունի 3-5 տարեկան 25-30 երեխա, որոնց քանակը լիովին բավարարում է թե մանկապարտեզի շահագործմանը, և թե նախակրթարանի հիմնմանը: Վերոնշյալների շահագործումը կդադարեցնի դրանց բացակայության պատճառով գյուղից հեռացող երեխաների արտահոսքը, կխթանի կրթական մակարդակի բարձրացմանը, բնականաբար կավելանա նաև համայնքում գործող 12-ամյա հիմնական դպրոցի աշակերտների թվաքանակը, որը այժմ իսկ մտահոգության տեղիք է տալիս:
- ✓ 2016 թ.ի նոյեմբերից սկսվել և 2017 թ.ին էլ շարունակվում են համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքները: Փոխվել են պատուհանները, դռները: Նախատեսվում է նաև շատ վատ վիճակում գտնվող՝ վերանորոգման համար ոչ պիտանի տանիքի ամբողջական փոխարինում:
- ✓ 2017 թ. Գարնանից նախատեսվում է սկսել գյուղում առկա 2 հայկական գերեզմանատների ցանկապատերի վերանորոգման և 1 ռուսական գերեզմանատան գոյություն չունեցող ցանկապատի կառուցում:
- ✓ Սկզբնական փուլում նախատեսվում է բարեկարգել գյուղի կենտրոնական փողոցները՝ասֆալտապատել, կանաչապատել, կատարել գծանշումներ և տեղադրել համապատասխան ցուցանակներ:
- ✓ Գյուղի կենտրոնում առանձնացված ազատ տարածքում կառուցել հրապարակ՝ տեղադրելով շատրվան, նստարաններ և հրապարակին անհրաժեշտ այլ պարագաներ: Ինչպես նաև նույն

տարածքում գտնվող՝ 2-րդ Համաշխարհային պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանի վերաթարմացում (ռեստավրացիա):

- ✓ 2017 թ.ից սկսած նախատեսվում է համայնքապատկան պահուստային վարելահողերից տարեկան 25-30 հա-ով մշակել բյուջեի միջոցների հաշվին, այնուհետև 1 տարի անց գյուղացուն հանձնել մշակված և հողագործությանը պիտանի հող, որը 25 տարուց ավել չէր մշակվել՝ դառնալով խոպան, որի մշակման համար գյուղացին չուներ բավարար ֆինանսական միջոցներ: Իսկ արդյունքում ստացված եկամուտները ևս ուղղել վարելահողերի մշակմանը: Այս քայլը լուրջ խթան կհանդիսանա հողագործության զարգացմանը և գյուղացիների զբաղվածության աճին:
- ✓ 2013 թ. Ասիական բանկի ծրագրի ֆինանսավորմամբ արոտավայրերի տարածքում կառուցվել են ջրագծեր և տեղադրվել խմոցներ, որպեսզի անասունները առանց լրացուցիչ ճանապարհ անցնելու ջուր խմեն: Ունենալով շահագործման համար ոչ պիտանի ջրամբար, առանց որի վերոնշյալ համակարգը անհնար էր շահագործել, 2017 թ. նախատեսվում է և ջանք չի խնայվելու վերակառուցել նոր ջրամբար, որպեսզի ընթացիկ տարվանից սկսած լուծվի անասունների խմելու ջրի խնդիրը՝ խթան հանդիսանալով եկամտաբերության բարձացմանը և հետևաբար նաև աստիճանաբար նվազող անասնագլխաքանակի աճին:

## *2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ*

*Համայնքի ֆինանսական իրավիճակը վերլուծելիս պետք է հստակ տարանջատել՝*

- *Համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),*
- *Ծրագրերի իրականացման համար համայնքներին հասանելի այլ միջոցներ (աղբյուրներ և ծախսային ուղղություններ):*

*Ֆինանսական կանխատեսումները պետք է արվեն 5 տարվա կտրվածքով և համեմատվեն ելակետային տարվա հետ (ՀՀԶԾ կազմման տարվան նախորդող տարվա փաստացի և փվյալ տարվա կանխատեսվող արժեքներ): Հստակ պետք է բացահայտել, թե ինչի հիման վրա են արվել կանխատեսումները:*
*Հնարավորինս կիրառել տեքստային և աղյուսակային ներկայացում:*
*Խոշորացված համայնքների դեպքում եկամուտներն ու ուղղակի ծախսերը ներկայացնել ըստ բնակավայրերի:*
***Ծավալի նկատմամբ սահմանափակում չկա, սակայն պետք է հիշել, որ համայնքի բյուջեն առանձին փաստաթուղթ է և կարիք չկա այն նույնությամբ ներառելու ՀՀԶԾ մեջ:***

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել՝ ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հողի հարկի, տրանսպորտային միջոցների և շենք-շինությունների գույքահարկի, հողերի վարձակալության վճարների և տեղական տուրքերի եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2016թ.՝ 68.6%, 2017թ.՝64.6 %, 2018թ.՝ 65.9%, 2019թ.՝ 67.0%, 2020թ.՝ 67.5%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր զրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ 4. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2015թ. փաստ. | 2016թ. փաստացի 01.10.2016 | 2017թ. կանխ. | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)* | 17198.3 | 10573.4 | 14497.1 | 15000.0 | 15700.0 | 16215.0 | 17100.0 |
| I. | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)* | 17.095.2 | 10545.9 | 14497.1 | 15000.0 | 15700.0 | 16215.0 | 17100.0 |
| 1 | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | **5018.5** | **2678.0** | **3333.5** | **3720.0** | **4100.0** | **4620.0** | **4450.0** |
| 1.1 | **Գույքային հարկեր անշարժ գույքից** | **3142.6** | **2036.9** | **2427.3** | **2600.0** | **2790.0** | **2960.0** | **3100.0** |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 315.9 | 128.4 | 160.0 | 200.0 | 240.0 | 240.0 | 300.0 |
| | Հողի հարկ | 2826.7 | 1908.5 | 2267.3 | 2400.0 | 2550.0 | 2700.0 | 2800.0 |
| 1.2 | **Գույքային հարկեր այլ գույքից** | **1632.8** | **611.1** | **725.2** | **900.0** | **1100.0** | **1350.0** | **1500.0** |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | **1632.9** | **611.1** | **725.2** | **900.0** | **110.0** | **1350.0** | **1500.0** |
| 1.3 | **Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ** | 243.0 | 51.0 | 181.0 | 220.0 | 270.0 | 310.0 | 350.0 |
| | Տեղական տուրքեր | 243.0 | 51.0 | 181.0 | 220.0 | 270.0 | 310.0 | 350.0 |
| 1.4 | **Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ** | | | | | | | |
| | Պետական տուրքեր | | | | | | | |
| 1.5 | **Այլ հարկային եկամուտներ** | | | | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | | | | | | |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | | | | |
| 2 | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ | 8567.7 | 6371.0 | 7905.0 | 8500.0 | 9000.0 | 9700.0 | 10200.0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | | | | | | | |
| 2.1 | **Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| 2.2 | **Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| 2.3 | **Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | 8567.6 | 6371.0 | 7905.0 | 8500.0 | 9000.0 | 9700.0 | 10200.0 |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 7343.6 | 5929.2 | 7905.0 | 8500.0 | 9000.0 | 9700.0 | 10200.0 |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | 1224.1 | 441.8 | - | - | - | - | - |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | | | | |
| 2.4 | **Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | | | | |
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| 3 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | 3509.1 | 1496.9 | 3258.6 | 3258.6 | 3361.4 | 3410.0 | 3490.0 |
| 3.1 | **Տոկոսներ** | | | | | | | |
| 3.2 | **Շահաբաժիններ** | | | | | | | |
| 3.3 | **Գույքի վարձակալությունից եկամուտներ** | 3509.1 | 1496.9 | 3258.6 | 3258.6 | 3361.4 | 3410.0 | 3490.0 |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 3349.1 | 1403.9 | 1360.0 | 1330.0 | 1410.0 | 1440.0 | 1500.0 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի | 160.3 | 93.3 | 1898.6 | 1898.6 | 1951.4 | 1970.0 | 1990.0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | վարձակալության վարձավճարներ | | | | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | | | | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | | | | | | |
| 3.4 | **Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,** այդ թվում | | | | | | | |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | | | | | | |
| 3.5 | **Վարչական գանձումներ** | - | - | - | - | - | - | - |
| | Տեղական վճարներ | | | | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | | | | | | |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | | | | | | | |
| 3.6 | **Մուտքեր տույժերից, տուգանքներից** | | | | | | | |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | | | | | | |
| 3.7 | **Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| 3.8 | **Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| 3.9 | **Այլ եկամուտներ*** | **103.0** | **7.0** | **-** | **-** | **-** | **-** | **-** |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | | | | | | |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 103.0 | 7.0 | - | - | - | - | - |
| II. | **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)** | | | | | | | |
| 1 | **Հիմնական միջոցների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | | | |
| 2 | **Պաշարների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| 3 | **Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| 4 | **Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| | Հողի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | |
| III. | **ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ** | **752.1** | **0.0** | **567.9** | **-** | **-** | **-** | **-** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ) | | | | | | | |
| Ա. | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2) | 752.1 | 0.0 | 0.0 | - | - | - | - |
| 1 | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | | |
| 1.1 | **Արժեթղթեր** | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.2 | **Վարկեր** | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.3 | **Փոխատվություններ** | | | | | | | |
| | -բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |
| 2 | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | |
| 2.1 | **Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն** | | | | | | | |
| | -համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | | | | | | | |
| | -իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր | | | | | | | |
| | -բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում | | | | | | | |
| 2.2 | **Փոխատվություններ** | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | -նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | | | | | | | |
| | -փոխատվությունների տրամադրում | | | | | | | |
| 2.3 | **Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը** | 752.1 | 0.0 | 567.9 | - | - | - | - |
| 2.4 | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս** | | | | | | | |
| 2.5 | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս** | | | | | | | |
| 2.6 | **Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում** | | | | | | | |
| | **որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը** | | | | | | | |
| Բ. | ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | | | | | | |
| 1 | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | | |
| 1.1 | **Արժեթղթեր** | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.2 | **Վարկեր** | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.3 | **Փոխատվություններ** | | | | | | | |
| | -փոխատվությունների ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |

*) Վարչականի յուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետայի նընդհանուր եկամուտների մեջ

## Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն
## ( եկամուտների և ծախսերի կանխատեսումը)

| Եկամտի և ծախսի տեսակը | 2015թ. տարեկանակ ան | 2017թ. կանխ. | 2015թ փաստ.նկատ % | 2018թ. կանխ. | 2015թ փաստ.նկատ % | 2019թ. կանխ. | 2015թ փաստ.նկատ % | 2020թ. կանխ. | 2015թ փաստ.նկատ % | 2021թ. կանխ. | 2015թ փաստ.նկատ % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը եկամուտներ** | 16975.0 | 14497.1 | 35.4 | 15000.0 | 88.4 | 15700.0 | 92.5 | 16215.0 | 95.5 | 17100.0 | 100.7 |
| Հարկային եկամուտներ, որից | 5113.0 | 3333.5 | 117.9 | 2800.0 | 118.3 | 2830.0 | 119.5 | 2920.0 | 123.3 | 3062.0 | 129.4 |
| Հողի հարկ | 3666.0 | 2267.3 | 61.8 | 2400.0 | 65.5 | 2550.0 | 69.5 | 2700.0 | 73.6 | 2800.0 | 76.3 |
| Գույքահարկ | 1355.0 | 885.2 | 65.3 | 885.2 | 65.3 | 1100.0 | 81.2 | 1610.0 | 118.8 | 1800.0 | 132.8 |
| Տեղական տուրքեր | 92.0 | 181.0 | 196.7 | 220.0 | 239.1 | 270.0 | 293.4 | 310.0 | 336.9 | 350.0 | 330.4 |
| Պաշտոնական ընթացիկ դրամաշն. | 8567.6 | 7905.0 | 92.3 | 8500.0 | 92.2 | 9000.0 | 105.0 | 9200.0 | 113.2 | 10200.0 | 119.5 |
| Այլ եկամուտներ | 3294.4 | 3258.6 | 98.9 | 3258.6 | 98.9 | 3361.4 | 102.0 | 3410.0 | 103.5 | 3490.0 | 105.9 |
| Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Տարեսկզբի ազատ մնացորդ | 752.1 | 567.9 | 75.5 | - | - | - | - | - | - | - | - |
| **Ընդամենը** | 17723.6 | 85.0 | 97.9 | 15000.0 | 84.6 | 15700.0 | 88.5 | 16215.0 | 31.5 | 17100.0 | 96.5 |
| **Ընդամենը ծախսեր** | 17723.6 | 85.0 | 97.9 | 15000.0 | 84.6 | 15700.0 | 88.5 | 16215.0 | 31.5 | 17100.0 | 96.5 |
| Ընթացիկծախսեր, այդթվում | 12154.5 | 11903.2 | 97.9 | 12294.5 | 101.1 | 12840.3 | 105.6 | 13330.3 | 109.7 | 14015.0 | 115.3 |
| Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ հիմն. աշխատ. աշխատավարձ | 8324.0 | 6545.0 | 76.2 | 7300.0 | 87.7 | 8000.0 | 96.1 | 8400.0 | 100.9 | 9000.0 | 108.1 |
| Ապրանքն. Գնման և ծառ. վճ. ծախս | 65.37.6 | 6060.0 | 92.7 | 5350.0 | 81.8 | 5250.0 | 80.3 | 5115.0 | 78.2 | 5200.0 | 79.5 |
| Սուբսիդիաներ | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 150.0 | 150.0 | 150.0 | 150.0 |
| Դրամա-շնորհներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Սոցիալականնպաստներ | 2700.0 | 1500.0 | 55.5 | 1500.0 | 55.5 | 1600.0 | 59.2 | 1800.0 | 66.6 | 2000.0 | 74.1 |
| Այլծախսեր | 62.0 | 860.0 | 1357.0 | 750.- | 1209.6 | 750.0 | 1209.6 | 750.0 | 1209.6 | 750.0 | 1209.6 |
| Ոչֆինանսական ակտիվներիգծով ծախսեր, այդթվում | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Հիմնականմիջոցներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |

## *2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Համայնքի զարգացման առկա դժվարությունները ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,
2. Նորհամայնքային ճանապարհների բարեկարգումնը և ասֆալտապատումը, համայնքային զբոսայգու և մանկական խաղահրապարակի վերջնական կառուցապատումը և կանաչապատումը:
3. Համայնքում մանկապարտեզի կամ նախակրթարանի բացակայությունը
4. Ազգաբնակչության սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում, որը իր մեջ ներառում է գյուղ մթերքների, մասնավորապես կաթի մթերման և վերամշակման կազմակերպում, բարձր կաթնատվությամբ տոհմային անասունների ձեռքբերումը և բուծումը, նոր գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերումը , ցանքատարածություններ ավելացումը և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումը:
5. Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով,

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը լուծելու համար:

## *2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈւԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ,
- ✓ Հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը՝այն կարելի է դարձնել հանգստի և առողջարանային գոտի,
- ✓ Համայնքի մայրուղուն և Սևանա լճին մոտ գտնվելը,
- ✓ Գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվելու համար նպաստավոր աշխարհագրական դիրքը և պայմանները
- ✓ Համայքի տարածքում պատմամշակութային հուշարձանների առկայությունը
- ✓ Ազգաբնակչությանը սպասարկող կոմունիկացիոն համակարգերի առկայությունը / գազ, էլ.հոսանք, մշտական խմելու ջուր, հեռահաղորդակցություն և ինտերնետ կապ / :

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

Վարելահողերի անջրդի և փոքր-փոքր կտրտված լինելը

Գործազրկության առկայությունը և արտագնա աշխատանքի մեկնողների մեծ քանակը,

Աշխատատեղերի պակասը:

Համայնքում բացակայում է ոռոգման համակարգը

Համայնքում արտադրական, հասարակական, կենցաղային ձեռնարկությունների և ժամանցի ու հանգստի գոտիների բացակայությունը

Խոշոր գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների բացակայությունը

